ՅԱԽԵԼՈՒԱԾ Ա· 130·

Բ· Գիրք 147· պատկ· 182·

ԱՂԱՑԻ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Դրան աջակողմ պատի վերայ Զազի արձանագրութեան տակ, նոյն գրչութեամբ·

1· *Ես Մխիթար մեղուցեալ ծառայ եւ Սարգիս ե*
2· *ղբայր իմ զմեր հոգո··· ի սբ գաւիթս: Ի:*
3· *դեկան եւ զմարտիրոդոգն յեկեղեցիս եւ եղբարքս*
4· *խոստացան մեզ: Գ: աւր պատարագ: Բ: ինձ եւ: Ա: Սարգսի*
5· *կատարիչքն աւրհնին յԱյ*

ՄԱՆՕԹ·— Ouw. Mat. XIII. 57· կարդում է երկրորդ եւ երրորդ տողում բազմակէտերով նշանակուած փչացած մասից յետոյ, «տուաք ի· դահեկան եւ զՄարտիրոսի հոգ··· սպասաւորքս» անհամապատասխան բնագրին: Զորրորդ տողի մէջ «պատարագել զիս···» փոխանակ մեր ճիշդ ընդօրինակած բնագրին:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Ա· 131–132·

Բ· Գիրք 147·

ԱՂԱՑԻ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Տաճարի արեւմտեան պատին, դէպի աջ դրնից·

1· *Ես Պետրոս եւ Հոգէդեղս աւգն*
2· *եցաք տանս եւ սպասաւորք սորա*
3· *հաստատեցին: Ա: ժամ ինձ եւ աւր: Ա:*
4· *Հոգէդեղին պատարագել զիս ի*
5· *տաւնի առաքելոցն·*

Իրրեւ շարունակութիւն
:Բ: աւր

1· *ժամ Տիրատրո որ: Ի: դահեկն ետ ի*
2· *գաւիթս որ խափանէ դատի ի Տէ*

ՄԱՆՕԹ·— Ouw. Mat. չունի:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Ա· 133·

Բ· Գիրք 147·

Կամաւն Այ ես Ի՞աչիկ ծառ···/:Ի: դկն ի սբ ուխտս:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Ա· 134–135·

Բ· Գիրք 148·

ԱՂԱՑԻ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Հարաւային պատին Դաւիթի պատկերաքանդակով յուսամուտի տակ երկրորդ արձանագրութիւնը·

1· *Ես անարժան աղախին Քի Գոհարս*
2· *եառու: Ի: դահեկան երե մխա*
3· *եւ այլ մխաբանք խոստացան: Ա: աւր ժամ Սորա գլխին է նոյն գրով, անմիջապես յուսամուտի տակ*
1· *Շնորհիւն Այ ես Ա (թ· քհնա?) եառու Ի· դ: ի սբ Ստէփ*
2· *անոս եւ սպասաւորք խոստացան··· (Բ: աւր?) ժամ: Ա: ինձ: Ա: իմ*
3· *հաւրն (թ)աթէոսի ով···

ՄԱՆՕԹ·— Առաջին արձանագրութեան մէջ ընդգծուած մասերը չատ մաշուած:

Երկրորդ արձանագրութեան կասկածելի առաջին տողի վերագծի մէջ առնուած մասը· երկրորդ տողինը մենք ենք աւելացնում, փչացած է: Երրորդ տողի մէջ «թ» եղծուած, մնացածի համար բոլորովին վստահ չեմ: երկուսն էլ գրուած միաժամանակ երեմիայի օրով: Ouw. Mat. չունի:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Ա· 136·

Բ· Գիրք 148·

ԱՂԱՑԻ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Ի՞աչքար, տաճարի հարաւային պատին կից·

1· *Շնորհիւն Այ ես Մարտի*
2· *րոս քահանայ կանկնեց*
3· *ի զխաչս բարէխաւս ինձ եւ ծնող*
4· *աց իմոց որք երկրպագէ*
5· *ք յիշեցէք ի Ք՞ս աղա*
6· *ի թվ: Զէ: Տր Ա՞ծ Իղի լեր պ*
7· *ահապան Մարտիրոսի*

ՄԱՆՕԹ·— Ouw. Mat. XIII. 60· Զորրորդ տողում «երկրպագանէք»: Վեցերորդում չունի «Իղի», այսինքն «Իսրայէղի»:

ՅԱԽԵԼՈՒԱԾ Ա· 137·

Բ· Գիրք 148· պատկ· 180·

ԱՂԱՑԻ Ս· ՍՏԵՓԱՆՈՍ

Հարաւային պատին դէպի արեւելք·

1· *Ցառաջնորդութե Գր· վդին ես Ղարսլան քարտուղար աթապա*